ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ

ԱՐԱՐԱՏ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՍԼԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ՝ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Սիրելի՛ երեխաներ, սրտանց շնորհավորում եմ ձեզ թերևս ամենալուսավոր ու պայծառ տոնի՝ Երեխաների պաշտպանության միջազգային օրվա առթիվ:

Առանձնահատուկ շնորհավորում եմ նաև Ձեզ, սիրելի՛ ծնողներ, քանզի ձեր ուսերին է դրված մանուկներին ընտանեկան ջերմությամբ շրջապատելու, արժանապատիվ սերունդ դաստիարակելու ամենակարևոր առաքելությունը:

Այսօր մենք փորձում ենք անել ամեն ինչ, որ մեր համայնքը լինի ավելի հարմարավետ ու գեղեցիկ և մեր երեխաների առօրյան էլ անցնի առավել հետաքրքիր և ուրախ:

Արարատի համայնքապետարանը, Երեխաների իրավունքների պաշտպանության օրվան նվիրված, համայնքի զբոսայգիներում և պուրակներում կազմակերպել է տոնական համերգներ և միջոցառումներ՝ փորձելով այս կարևոր օրը վերածել իսկական տոնի մեր սիրելի փոքրիկների համար:

Սիրելի՛ փոքրիկներ, կրկին շնորհավորում եմ ձեզ հունիսի 1-ի՝ Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվա առթիվ՝ ցանկանալով ձեզ անհոգ և լուսավոր մանկություն, խաղաղ երկինք և անսպառ ժպիտներ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՍԼԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ